



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

294

294

ԿՈՄՍՅԱՆԻ ԿՈՄ. ԿՈՒՍ. (Բ) ԿԵՆՏՐ. ԿՈՄ. ԿՈՒՍԳԱՏ.

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ  
ՏԱՍՆԱՄՅԱԿԸ





ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ — 1930

8 DEC 2017

ՀԱՅԵԱՍ. ԿՈՄ. ԿՈՒՍՏԱՆԿ. (Բ) ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏ. ԿՈՒՍՊԵՏ.

9.323.2(47925)

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ  
ՏԱՍՆԱՄՅԱԿԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

Յերեվան—1930

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՍԱԲՈՒԹՅԱՆ 10-րդ  
ՏԱՐԵԻԱՐՁԸ

(Նյութեր զեկուցողների համար)

Լրանում ե Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների և հեղափոխական զինվորների առաջին մասսայական հեղափոխական լեյուզիթ՝ մայիսյան ապստամբության 10-րդ տարեգարձը:

1. 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության առաջին խիստ ծանր Անդրկովկասի բուրժուազիան և կալվածատերերն հակահեղափոխական կուսակցությունների՝ (Վրաց մենշևիկներ, Մուսավաթի, Դաշնակցության) դեկավարությամբ պատրաստվեցին դիմադրել պրոլետարական մեծ հեղափոխությանը: Շնորհիվ սոցիալ-դեմոկրատները և սոցիալիստ-հեղափոխականների բացահայտ դավաճանության, բուրժուազիան հաջողվեց անջատել, թուլացնել հարյուր-հազարավոր բազմացեղ պրոլետարիատի ուժերը, և ապա՝ միջազգային ու ներքին հակահեղափոխական ուժերով Ռուսաստանի խորհրդային իշխանության տարիներ պաշարված լինելու հետևանքով, սկզբից Անդրկովկասի իշխող դասակարգերին հաջողվեց նաև հենված տաճկա-դերմանական, ապա Անտանտի իմպերիալիստական ուժերի վրա՝ 2—3 տարի ևս քարշ տալ իրենց գոյությունը, խուսափել Հոկտեմբերի ակտիներից:

2. Անդրկովկասի կոմիսարիատին 18 թ. փետրվարի 10-ին փոխարինեց սեյմը, վորն ապրիլի 9-ին

Հրատ. № 1300

Գրանից. № 5144 (բ) Պատվ. № 459 Տիրաժ 3000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում:



1-32629բ

արդեն հայտարարեց Անդրկովկասի անկախությունը Ռուսաստանից: Նույն թվի մայիսի 26-ին որսապահաս սեյմն ինքնալիվիզացիայի լեյթարկվեց, և լեռնու որվա ընթացքում ծնվեցին լեռեք մանր հանրապետություններ՝ Վրաստան, Ադրբեջան և Հայաստան: Այդպիսով թաղվեց յուրորինակ բուլժուական ֆեոդալացիան, վորն իր միջանի ամսվա գոյության ընթացքում պատմությանը թողեց այնպիսի սև եջեր, ինչպիսին են Թիֆլիսի Ալեքսանդրյան այգում հեղափոխական միտինգի գնդակոծությունը, ռուսական բանակների եշխոններ զինաթափումը— Շամքորի սպանդանոցը, տաճիկներին կովկաս հրավերելը և Հայաստանում թուրքական. իսկ Ադրբեջանում հայկական գյուղերի «մաքման, սրբման» սկիզբը: Այդ շրջանում միայն Բագվի պրոլետարիատը, վորն արդեն 15 տարի յեր, ինչ հանդիսանում եր Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի ամենաուժեղ հատվածներից մեկը՝ բայլընիկյան կուսակցության ղեկավարությամբ, մինչև 18 թ. հուլիսի 31-ը կարողացավ բարձր պահել պրոլետարական հեղափոխության զրոշը և համառ պայքար մղել Բագվի կոմունեան պաշտպանելու համար ներքին և թե արտաքին հակահեղափոխական թշնամի ուժերից:

3. Հեղափոխական կուսակցություններն Անդրկովկասի բաժանումն ու ծվատումը փորձում էին վերագրել միայն արտաքին հանգամանքներին— տաճկական բռնի ուժին, մինչդեռ այդ սկիզբ եր առնում այն որից, չերը ամեն ազգություն իր համար կազմակերպում եր ազգային խորհուրդներ, առանձին ազգային գնդեր և այլն: Անդրկովկասի կոմիսարիատի ու սեյմի

գործն այն լեղավ, վոր կարողացան ժամանակ շահել բորբոքելու, թունավորելու առանձին ազգությունների աշխատավորությանն ազգային ատելության թույնով, վորպեսզի մեկուկացվի նրանց միջազգային համերաշխությունը, անջատվեն դարավոր տնտեսական կապերը և մեռցվի հեղափոխական տրամադրությունը:

4. Այդպիսով 18 թ. հունիսի 14-ին Բաթումում ոսմանյան սուլթանական կառավարության հետ կընքած «խաղաղության և բարեկամության դաշինքի» տակ Անդրկովկասի պատվիրակներն ստորագրեցին վնչ վորպես ամբողջական լեռերի, այլ վորպես իրարից անկախ, առանձին լեռեք հանրապետությունների պատվիրակներ: Այստեղ տաճկա-գերմանական իմպերիալիզմին տրամադրվեցին վնչ միայն Անդրկովկասի յերկաթուղին Բագուն նվաճելու համար, այլ ամբողջ լեռերի աշխատավորության բաղդն ու տնտեսությունը՝ չմոռանալով մասսաների հեղափոխական յուրաքանչյուր շարժումը ևս բնում խեղդելու գործը, ըստ վորում Հայաստանի հետ կնքած դաշնագրի 4-րդ հոդվածով ոսմանյան կայսերական կառավարությունը պարտավորվում է ղենքի ուժով ոգնություն հասցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը այն ղեպքում, յերը վերջինս նրան կխնդրի այն մասին՝ կարգը և հանդստությունը յերկրում ապահովելու համար: Իսկ 2 ամիս հետո Արարատյան Հանրապետության պատվիրակությունը, Այվ. Ահարոնյանի գլխավորությամբ հովանավորություն եր աղերսում «բարերար» խալիֆից— «ղաշնակից» սուլթանից:

5. Քաղաքական այդ մահաբեր կոմիդիան լրիվ եր, բայց ավելի լրացավ, յերը պարտվեց գերմանո-

տաճկական իմպերիալիզմը, և Անդրկովկասի բուրժուազիան իր կուսակցութունները դեկավարությամբ նետվեց նոր «Նովանավորող դաշնակցի» գազան Անտանտի գիրկը՝ յերկիրը տրամադրելով նրանց: Անտանտայի համար ավելացավ նոր թալանի աղբյուր, հեղափոխության դեմ կռիվը համար նոր ուղղակի «մատերիալ»:

Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը 1918 թվի մայիսի 28-ին ինքզինքը Հայաստանի կառավարություն հռչակելով՝ տեղափոխվեց Հայաստան: Ոգոստոսին հրավիրվեց Հայաստանի խորհուրդը, վորը մի տարի հետո 19 թ. ոգոստոսի 1-ին տեղի տվեց բարձրահնչյուն պարլամենտին, սակայն «անկախ» յերկրի պարլամենտը և վոչ մի անգամ չկարողացավ հանդիմանել «փրկարար» Անտանտայի վորևե գնդապետի կամ շարլատան կապիտանի մասի շարժումներին:

6. Սկսվեց մի չտեսնված սպանդ ու ավար, այսպես կոչված՝ սահմանաչին վեճերի առթիվ: Հայաստանի դաշնակներն ու Ադրբեջանի մուսավաթականները կատաղի մրցման ելին դուրս յեկել աշխատավորությանը սրի քաշելու, ամբողջ շրջաններ թալանելու և հրի մատնելու գործում: Նույն փոխհարաբերությունն սկսեցին նաև Վրաստանի հետ: Տեղի ունեցավ հայվրացական պատերազմը (18 թ. աշնանը): Յերեք հանրապետությունների աշխատավորությունը հյուժվում, շահագործվում էր ամենորյա պատերազմների սարսափի տակ, և այդ բոլորի մեջ անմասն չեկին մուսուլմանները և Անտանտայի հյուժ հնադարյան թալանաբերում, պետական կուսակցություն դառած Դաշնակցու-

թյունն առաջնակարգ տեղ էր գրավում: Տաճիկների հետ քաշվելու հետևանքով, հայ բուրժուազիայի այդ մարտական կուսակցությունն ավելի էր հանդուգն դառել և ավելի ազահացել: «Ձառկավորվելով» գերեզմանոցի վերածված յերկրի սահմաններում, Հայաստանի գյուղացիության արջան գնով նա փորձում էր իրագործել հին յերազ— «ծովից ծովը»:

7. Դաշնակցության ազգային քաղաքականությունը «ամենսպարզ և ամենահեշտ» էր բոլոր յեղածներին «մաքել, սրել», հայացնել յերկիրը «ներքին թուրքի» և կտրացնել արտաքին թուրքի կյանքի ու հողի հաշվին: Ուստի արջան լճերի և մոխրակույտերի վերածվեցան Ջանգիրասարի, Բեյուքվեզի, Աղբաբայի, Ղարսի, Ջանգեղուրի և այլ շրջանների հարչուրավոր թուրքական գյուղերը, վորի հետևանքով ավելի կործանվեց յերկրի տնտեսությունը մյուս կողմից՝ նմանորինակ «փոխհատուցման» լինթարկվեցին թուրքական շրջանների հայաբնակ վայրերը (Նախիջևան, Գողթան, Ղարաբաղ և այլն):

8. Ծանր էր Տաճկահայաստանի գաղթականության դրությունը, վորոնք չեկին կարող ամբանալ հողին, վորովհետև նախ՝ բացակայում էին անհրաժեշտ տարրական միջոցները, անորոշ էին յերկրի քաղաքական բաղդը, ամենորյա խոստումների համաձայն սպասում էին վերադառնալ իրենց նախկին վիլայիթները, և գլխավորն այն պատճառով, վոր այդ ուղղմանակ հսկայական մասսան պատերազմների և այլ վտանգավոր պայմանների ժամանակ հանդիսանում էր լավագույն զինված ուժը, ուստի Դաշնակցության բնավ ձեռնտու չէր ձեռք քաշել զրանից և ավելի վտանգել

առանց այն ել իրենց խախուտ իշխանությունը: Այդպիսով այդ հսկայական մասսան, յերկար տարիներ կտրվելով աշխատանքից՝ ավելի չէր ընտելանում անաշխատ «հեշտ» վաստակի, թալանի՝ իր միջից տալով խմբապետական— լենինիստական մի կուռ ուղմական ուժ: Այս ուժի կողքին կառավարութիւնը ստեղծել էր տանջակ հաղաբավոր թալանով ու գյուղացիութեան հաշվին պահպանվող իրավազուրկ մի բանակ, վորը լենինիստական յարակաւ սալդատչիկներու շնորհիւ անցած ռեփրոմարիստական դաժան ձեռքերին, բռնութիւններին և այլ վտանգութիւններին: Այդ հոգնած, բռնի ուժով զինած մասսայի դասալքութիւնը մեծ էր և հարատև:

9. Համաշխարհային պատերազմի տարիներին քայքայված գյուղատնտեսութիւնն ավելի քայքայվեց և կանգ առավ: Բավական չէր, վոր հանապարհների փակ լինելու հետևանքով Հայաստանի մի շարք գավառների տանջակ հաղաբավոր գյուղացիները զբրկվել էին իրենց յերեկվա ապրուստի աղբյուրից— կենտրոնական արդունաբերական վայրերից (գլխավորապես Բագուն), բավական չէր, վոր զբրկվել էին մինչ 1917 թ. ամեն տարի դրսից ներմուծվող մի քանի միլիոն փութ ալյուրից ու հացահատիկից, այլ և գյուղացիութիւնն հնարավորութիւն չունէր ցանելու դաշտերի յերկու- յերրորդականից ավելին: 1919 թվին ոգտագործվել է ցանքադաշտերի 27 տոկոսը: Անասունների 31—32 տոկոսն էր մնացել. այգեգործութիւնն ու բամբակի մշակութիւնը համարյա վերացվելու աստիճանի չէր հասել: Իսկ ողնութեան հուշ և վոչ մի տեղից: Հետագայում Ամերիկայից ստացվող «նվիրա-

տվութիւնը» — ալյուրն ու կաթը, գյուղացուն չէր հասնում: Մերմացու չկար, գյուղացու քաղցած ընտանիքը, տնտեսած սերմացուի մեծ մասը, յերբեմն ամբողջովին՝ մինչև ցանելն էր սպառվում. իսկ յիթե մի քանի շրջաններում աննշան քանակութեամբ սերմացու չէր տրվում՝ այն ել «դեմոկրատական իշխանութիւնը» բաշխում էր գյուղի ունեւոր տարրերին:

10. Կանգ էր առել միանգամայն առանց այն ել թուլլ արդունաբերութիւնը. յեղած արհեստանոցներն այնքան էլին աննշան, վոր անտեսական վոչ մի ուժ չէին ներկայացնում յերկրի ծով կարիքներին առաջ: Նավթ չկար. հաճախ շոգեմեքենաները ճանապարհի կիսին կանգ էլին առնում կամ վախտով առաջ գնում: Քայքայվում, վիշանում էլին փոքրաթիվ գործարաններն ու հանքերը՝ տարիների անգործութեան և անտեղութեան հետևանքով: Յերկրի տնտեսութիւնը և նրա ձեւվը հեռ էր գնացել:

Այս պայմաններում պետութիւնն անկարող էր համաճարակի առաջն առնել, վորը սովի հետ միասին անխնա հնձում, նոսրացնում էր յերկրի աշխատավոր ընչազուրկ բնակչութեան շարքերը: Դեռ չգաղթած հարյուրավոր գյուղեր յերեք տարում կորցրին իրենց բնակչութեան 20—30 տոկոսը: 1919 թ. միայն մայրաքաղաքում — Յերևանում մեռել է 14,000 մարդ, իսկ Դաշնակցութիւնը մինչև վերջն էլ շարունակում էր իր ջարդարար քաղաքականութիւնը՝ ազգամիջեան կոտորածներն ու արշավանքները:

11. Այդ գոխային կացութիւնը կարծես բավական չէր, վոր մի կողմից էլ աշխատավորութեան կրծքին ծանրացած էր միջնադարյան չուրորինակ վար-

չական սիստեմը: Խմբապետները, վաշտապետները, լի-  
ազորների «գործունեությունը» վոչ մի պատասխա-  
նատվություն մը չեր սահմանափակվում, այլ ընդհակա-  
ռակը, կառավարությունն իր վարչաձևով նպաստում էր  
դրան: Գործությունը, գանձագործությունը, կաշառակերու-  
թյունը և ահռելի ազատ սպեկուլացիան սիստեմ էր դա-  
ռել վորից անմասն չէին մնում պարլամետի անդամ-  
ներն ու մինիստրներն, այն ժամանակ, չեր մյուս կողմից  
հազարավոր վորք յերեխաները «մատույլ ալյուրի փոշի  
ելին լիզում», սովաճար մասսաները խտուով և հնձված  
արտերից հավաքած հատիկներով սնվում:

12. Սովից հյուծված, ուժասպառ չեղած մասսան  
խուլ բողոքում էր և աստիճանաբար պատրաստվում  
դուրս գալ ուժով իր վզին փաթաթված դժոխային  
այդ պայմաններից: Յեղքը կար: Այդ նրան ցույց էր  
տվել և արդեն յերրորդ տարին էր ցույց էր տալիս  
Ռուսաստանի պրոլետարիատը: Սակայն թվ պետք է  
կազմակերպեր, ընթացք տար այդ բողոքներին և առաջ-  
նորդեր գալիք հեղափոխությունը, յեթե վոչ այդ մաս-  
սաների միակ հարսպատ հեղափոխական ավանգարդը—  
կոմունիստական կուսակցությունը:

13. Չնայած 1917 թվից Հայաստանի մի քանի  
գավառական կենտրոններում գոյություն ունեյին  
բալչևիկյան կազմակերպություններ, խմբակներ, բայց  
քաղաքական, տնտեսական ծանր պայմանների ու  
զեկավար ուժերի պակասության պատճառով հնարա-  
վոր չէր չեղել կազմակերպել մի ուժեղ հանրապետա-  
կան կենտրոն: Այդ գործը 19 թ. ամառվանից իր վրա  
վերցրեց կոմկուսակցության Անդրկովկասյան Յերկրա-  
չին կոմիտեն՝ Հայաստան ուղարկելով մի շարք փորձ-

ված հին բալչևիկ ընկերներ: Կարճ ժամանակամիջո-  
ցում հաջողվեց շրջագայել կապեր հաստատել շրջան-  
ների ու գավառների հետ, նույն թվի սեպտեմբերին  
հրավիրվում է հանրապետական խորհրդակցություն,  
վորի գլխավորություն մը ծավալվում էր գաղտնի  
կազմակերպչական աշխատանքները: Սերտ կապ էր  
պահվում Յերկրային կոմիտեյի հետ: Աշխատանքներն  
արագ թափ էն առնում բանվորների մեջ (դեպի, չեր-  
կաթ գիծ, տպարան, գարաժ և այլն), գյուղերում,  
բանակում, նաև չերիտասարդության մեջ՝ Յերևանի  
չերիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կողմա-  
մակերպության միջոցով: Չորս ամիս հետո, 1920 թ.  
հունվարին Յերևանում հրավիրվում է համահայաս-  
տանյան առաջին կոնֆերանսը, վորտեղ առորչա աշ-  
խատանքների, հետագա անելիքների և քաղաքական  
գծի վերաբերյալ ընդունվում էն համապատասխան  
բանաձևեր: Այստեղ ընտրվում է նոր կենտրոնական  
որդան՝ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ): Կոնֆերան-  
սի ժամանակ կազմակերպության թիվը հասնում է  
500-հոգու:

14. Հայաստանի չերկաթուղային բանվորու-  
թյունը, վորի առաջավոր մասն անցել էր Բաղվի և  
արդյունաբերական այլ քաղաքների հեղափոխական  
շկուլան՝ կազմակերպվում էր պրոֆմիտությունների մեջ,  
իսկ վերջիններիս ղեկավարությունն աստիճանաբար  
անցնում էր կոմունիստների ձեռքը, (Ալեքսյուր, Սա-  
րիղամիշ և այլն) քաղաքականի վերածելով տնտե-  
սական գործադուլները: Յերկաթուղային բանվորու-  
թյունը հեղափոխական վոգու կենդանություն է դըր-  
սկորում դաշնակցական Հայաստանում: Արագությունը

ծավարվում, ուժեղանում է այն շրջանների գյուղական կոմբըշիջները, վորոնք նույնպես դեռ ընդամենը 2-3 տարի յե, ինչ կտրվել էլին Բագվի և այլ արդյունաբերական քաղաքներից:

15. 1920 թվի սկզբից, հաղթական կարմիր բանակի զրոհներից, Դենիկինի ուժերի ջախջախման և կարմիր բանակի դեպի Հյուսիսային Կովկաս առաջ շարժման հետ միասին՝ դարգանում, ուժեղանում եր բանվորա-գյուղացիական մասսաների և նույն մասսաների զինքի տակ հավաքած մի մասի՝ զինվորութան հեղափոխական տրամադրությունը, վորն արտահայտվում եր բողոքների, ցույցերի, միտինգների, գործադուլների և բանակում անհնազանդություն ձևերով: Հանկարծակի չեկած դաշնակցական իշխանութունն այս բոլորը զգում, տեսնում եր, և առաջն առնելու համար, տակավին հռչակար մարտ ամիսներին անցավ գործնական քայլերի՝ նախ մասսաները գլխատելու փորձով Ալեքսպոլում, Դիլիջանում, Յերևանում, Սարիղամիշում բանտարկեց կամ աքսորեց ձեռքն ընկած ղեկավար ընկերներին:

16. 1920 թվի տարիլի 28-ին Ադրբեջանում հայտարարվեց Խորհրդային Իշխանութուն: Այդ լուրն անմիջապես հասավ Հայաստան այն ժամանակ, չերբ արդեն տենդային պատրաստություններ էլին տեսնվում տոնելու միջազգային պրոլետարիատի համերաշխութան որը՝ մայիսի 1-ը: Այսպիսով, արտաքին բարենպաստ հանդամանքներից, ներքին, կուտակված անհամբերությունն ավելի եր խթանվում: Դաշնակցութունը չկարողացավ թագցնել այդ լուրը, միայն անցով իր սովորական պրովակացիաներին՝ հայտարա-

րելով, վոր այդ, Հայաստանը նվաճելու պատրվակով ե սարքված, մուսավաթական կեղծ հեղաշրջում ե և այլն, վորպեսզի կարողանար գոնե դրանով մասսաների տրամադրությունը բեկել, յերկընտարանքի առաջ դնել: Սակայն վոչինչ չեր ոգնում, իսկ դեպքերը հատունանում էլին չաեսնված արագությունը:

17. Մայիս-մեկյան տոնի որը կոմունիստական դրոշների շուրջը խմբված մասսաներն առանձին վոգեվորություն ու հաջողություն մտեսցին Յերևանում Ալեքսպոլում, Ղարսում, Ղարաքելիսայում, Սարիղամիշում և այլ վայրերում: Նախատեսնելով բալլեիկների հաջողությունները՝ դաշնակները փորձում էլին կանխել այդ, ըստ վորում փորձում էլին իրենք ևս մասնակցել տոնին՝ ինիցիատիվ խլելու և դաշնակցական բնույթ տալու համար, մինչև անգամ վորոշում են Յերևանում, իմիջիայլոց, պարզել նաև Մարքսի և Շահումյանի նկարները: Սակայն նրանց բոլոր հույսերը ու ջանքերն ջուրն ընկան, վորովհետև ամենուրեք իրենց կուսակցական և հանրապետական դրոշակների յեակից միայն կուսակցականները, անորոշ զբաղմունքի տեր մարդիկ և խանութպաններն էլին գնում: Նրանց պրովակացիոն ճառերն արժանանում էլին «կորչի» բացականչությունների սուլոցների, և զրկում էլին խոսելու հնարավորությունից: Վոչ մի պրովակացիա կամ «ազգային դավաճան» ուսպիկներ չելին ոգնում այլևս: Միլիցիան չեզոք եր, կառավարությունը և տեղական իշխանությունները գլխակորույս և շմած ցուցարարների այդ որով «Կեցցե խորհրդային իշխանութունը», «Կեցցե կոմկուսակցությունը», «Կորչի Դաշնակցությունը», «Բագուն ընկավ, հերթը Յերևան»:

նինն ե» լողունգները շատ պարզ ու վորոշ ելին հնչում, ընդունվում «ուռաներով» և անխուսափելի դարձած մտտիկ ապագայի բնույթը վորոշում:

Վոգեկորված բանվորները, զինվորները և աշխատավոր քաղաքացիները վերհիշած կենտրոններում խաղաղ շքերթները բուռն բողոքի ցույցերի վերածեցին: Կոմմունիստ ընկերների ամենուրեք գործ դրած ջանքերով միայն կարելի յեղավ խուսափել բռնկումներից ու եքսպեսաներից: Այդ որվանից Ալեքսյուրում, Ղարսում, Սարիղամիշում փաստորեն սկսեց գոյութուն ունենալ յերկիշխանություն, մեկը վարկաբեկված — դաշնակներինը, մյուսը կոմմունիստական կազմակերպությունների կոմիտեներն ու հեղկոմները:

18. Դրությունն ավելի սուր կերպարանք ստացավ Ալեքսյուրում, վորը Հայաստանի բանվորական կենտրոնն էր, ուր կենտրոնացած ելին մեծ թվով զորամասեր: Կոմմունիստների յետևից գնում էր միքանի հազար կազմակերպված մասսա: Յուցարարները ուղղվում են զորանոցների կողմը, վորտեղ զինվորական գնդերը միանում են նրանց: Միտինդը վողջույնի հեռագիր է ուղարկում Ազրբեջանի ռեկոմին: Զրահապատի պետ ընկ. Մուսայեկյանն իր ձառում հարձակվում է Դաշնակցության վրա և հավատարմությունը հայանում հեղափոխությանն ու խորհրդային իշխանությանը: Յուցարարները զինվորների մի մասի հետ վերադառնում են քաղաք: Դաշնակներն իրենց ակումբից պրովակացիոն գնդակ են արձակում ցուցարարների վրա, վորի հետևանքով տակն ու վրա յե լինում նրանց ակումբը: Այդ որը ձակատագրական նշանակութուն ունեցավ հետագա անցքերի համար:

Կենտրոնական իշխանությունը հեռագրում է զրահապատի պետին՝ շտապ անցնել Ղամաբույի «ճակատը» ընկ. Մուսայեկյանը խուսափելով ծուղակից՝ մերժում է հրամանը: Այսպիսով կալարանն ու զրահապատն ապստամբական դրության մեջ եր:

19. Դեռ մայիսից առաջ հացի ճգնաժամը հասել էր իր գագաթնակետին: Մայիսյան հաջող ցույցերից հետո, Յերևանի քաղցած դաղթականները, չքավոր քաղաքացիները, զլխավորապես կանայք, 3-ին բունտեր են սարքում, թալանում ուտեստի մի շարք խանութներ: Մայիսի 4-5-ին «ժամանակավորապես» արձակվում է պարլամենտը: Դաշնակցության Արևելյան Բյուրոն յերկրում ղեկտատուրա յե հայտարարում, և Համո Ռնանջանյանի նախագահությամբ ստեղծվում է նոր կարինետ: Ուշքի յեկած մտուզերիզմը նույն որը գործադուլները հայտարարում է պետական հանցանք: 6-ին արտակարգ դատարաններ հիմնում տալով լայն ու վերջնական իրավունքներ, 7-8-ին Յերևանում սկսում են խուզարկությունները և Կոմմունիստների ու բանվորների մասսայական ձերբակալությունները: Նրանց հաջողվում է ձերբակալություններ կատարել նույն որերին նաև Ղարաքիլիսայում և Իգդիրում: Միշարթա դադարի հետևանքով զվարած Դաշնակցությունն արդեն անցնում է հարձակման: 8-ի որենքով «ցմահ տաժանակիր աշխատանքների» յե դատապարտվում մինչև անգամ հակապետական ձուռ ասողը կամ թերթ տարածողը: Այս նշանակում էր որենքից դուրս հայտարարել Կոմմունիստներին: Դաշնակցությունը գնդի տակ առած իր անդամներին, գործողության հրավիրեց խմբապետ Սեպուհի խումբը, և ամսի 9-ին ուղղվեց զեպի Ալեքսյուր:

Մինչ այդ «սպողիցիոն» հակահեղափոխական կուսակցութիւնները՝ հայ-սօցիալ-դեմոկրատիան (սպեցիֆիկներ), ռամկավարական, եսերական և ժողովրդական կուսակցութիւնները մայիսի 5-ից բոլոր ուժերը տրամադրեցին «չերկրի միակ իրավասու» կուսակցութեան — Դաշնակցութեանը և իրենց ագիտացիայով ու գործնական քայլերով անմասն չմնացին ապստամբութեան ճնշման գործում: Կրօնն ու լեկեղեցին խաչ ու խաչվառով լրացրին համատարած ռեակցիայի շարքը:

Այսպիսով, սեւ-հարլուրակալին մի ամբողջացած ուժ պատրաստվեց դիմադրելու բռնկված հեղափոխութիւնը:

20. Ալեքսանդրի կուսկոմիտեյի առաջ մնացել եր յերկու ճանապարհ — կամ ապստամբվել և իշխանութիւնը գրավել, փրկել անորոշ դրութիւնը և կուսկազմակերպութեան հեղինակութիւնը, կամ ակտիվ քայլերի չը դիմելով յինթարկվել դաշնակցութեան քայքայմանը, վորից պիտի քայքայվեր և կազմակերպութիւնը, և կորսվեր գալիք ապստամբութեան հեռանկարը: Կոմիտեան դիմեց Արմենկոմիտին և սպասեց սանկցիայի: Մայիսի 5-ին Արմենկոմիտի յերկու ներկայացուցիչներին գործուղելով Ալեքսանդրի սանկցիա տվեց ապստամբութեան, չնայած մինչ այդ նա վորոշում ուներ ապստամբութիւնն սկսել Ղազախից: Կազմակերպվեց ռազմահեղափոխական կոմիտե. աշխատանքները բաշխվեցին, և լույս 6-ի գիշերը վորոշվեց 8-ին իշխանութիւնը գրավել, վորը, սակայն, զինված միջոցների դիմելով՝ փաստորեն գրավվեց 10-ի յերկուցամս: Դեռ 10-ից առաջ, դաշնակներից շատերը փախել էին շերջանները՝ կազմակերպելու կուլակալին տարբերին:

1-3226299

Ամսի 11-ին Անի-Ադին գծի վրա զրահապատն ընդհարվում է Սեպուհի զորամասերի հետ, վորից վերջինս թողնելով գիծը՝ քաղաքի վրա արշավում է գյուղերով: Զաջուռի կողմից առաջանում է դաշնակցական մի վաշտ: Կարմիր բանակի շտաբի պետ եր նշանակված Դաշնակցութեան հլու ծառա, ցարական սպա Կորգանովը, վորն իր մի քանի խորամանկ ու գաղտնի հրամաններով կարողացավ քայքայել ամբողջ ճակատը և հնարավորութիւն տալ Դաշնակցութեան փոքրիկ զորամասերին՝ ողակել ապստամբ քաղաքը: Զգացվում եր պարենի խիստ պակասութիւն: Այս բոլորը մի ընդհանուր լքումն եր առաջացրել գլխավորապես գործի մեջ: 13-ին Սեպուհն ուղարկում և մի վերջնագիր: Ռազմահեղափոխական կոմիտեն կշռելով իր դրութիւնը, 13—14-ի գիշերը վորոշում է թողնել զրահապատը և հեռանալ քաղաքից: Այսպիսով, Ալեքսանդրում առանց կռիւ գրավվում է իշխանութիւնը և համարյա առանց կռիւի հետ հանձնվում:

21. Մայիսի 10-ին, Ղարսի հեղկոմը ևս հայտարարում է խորհրդային իշխանութիւն. ակտիվ մասնակցութիւն է ունենում գարածը, յերկաթգծի բանվորութիւնը, բերդի հրետանու 2-րդ վաշտը և պարետային վաշտը: Դաշնակները մի քանի անգամ փորձում են զինաթափ անել ապստամբ ուժերը, բայց չի հաջողվում: Ալեքսանդրի զրահապատը չի յերկում, չնայած խոստանում է գալ: Կաշազորի կեսը հանդիսատեսի դերումն է մնում: Հաջորդ օրը դաշնակներին հաջողվում է գրավել կայարանը: Հեղկոմի շտաբը տեղափոխվում է Կաշազորի և թնդանութային կրակ բաց անում քաղաքի վրա: Զինվորները հրաժարվում են շարու-



նակել ումբուսի թիւը: Անհնար է դառնում շարունակել սկսած գործը, և հեղկոմը հավատարիմ հեղափոխական ընկերների հետ, թվով 28 հոգի, լույս 13-ի գիշերը ձեռքում է թշնամու շղթան և ուղղվում դեպի Ալիքալ: Չարդելով ճանապարհը կտրած Մացրա գյուղի տերտերի խումբը՝ հասնում են Արգինո գյուղը, վորտեղ հանգստանալիս պաշարվում են հետապնդող թշնամու ուժերով: Սկսվում է տաք կռիվ, բայց փափուշը վերջանում է. մահացու վերք է ստանում ապստամբութեան ղեկավար Դուկաս Դուկասյանը: Մուսթն ընկնելուց հետո, ընկերների մի մասը կարողանում է ազատվել: Արգինոյի կռիվը Հայաստանի գալիք քաղաքացիական կռիվների ազդանշանն էր: Թշնամին հաղթելուց հետո անգամ չկարողացավ չասել «Հառաջ»-ի եջերում, վոր դա «Դարսի խոսվարարների վերջին հերոսական կատաղի պայքարն էր, ուր խփվեցին 9 հոգի և գերի ընկան 7-ը»:

22. Մարիդամիշում ապստամբութեանը չեղավ 11-ին: Այստեղ թե ընդհանուր պայմանները և թե ապստամբութեան ընդհանուր կազմակերպումն այլ ելին. շնորհիվ գծի ուժեղ կազմակերպված բանվորութեանը և այնտեղ կանգնած ամենահեղափոխական զնդերից՝ 4-րդ գնդի՝ ապստամբութեանը կատարվեց հաջող նախ՝ վաղորոք բաժանված էր աշխատանքը, և աշխատանքների բոլոր ասպարեզները վատահելի ձեռքերի մեջ դրված: Ապստամբութեանը սկսվեց հակահեղափոխական ակտիվ ուժերի ձերբակալութուններով, դիմադրութեան փորձերը ճնշվեցին գենքով: Այստեղ ևս զբաղապատին ելին սպասում: Իմանալով Դարսի ընկերների գրութեանը՝ փորձեցին ոգնութեան հասցնել,

բայց ուշ էր: Մայիսի 18-ին հեղկոմն ընտրեց քիչ գոհերի ուղին և ինքնալիկվիդացիայի լեյթնանտներով: Սեպտեմբեր մտնելով Մարիդամիշ՝ ձերբակալեց 60-ի չափ հեղափոխական ընկերների, վորոնց ղեկավարներից չորս հոգու խեղդեցին Դարսի լճում: Մի մարդու պես կանգնած հեղափոխական 4 ըզ գունդը, վորն իր հեղափոխական մկրտութեանը ստացել էր դեռ ապրիլին՝ չերկու անգամ ազատելով ձերբակալված ընկերներին, չորտադրովեց հեղափոխութեան համար:

23. Սրանով չվերջացավ մայիսյան շարժումը: Արմենկոմի կողմից Նոր-Բայազետ ուղարկած ընկեր Հ. Մարուխանյանի ղեկավարութեամբ մայիսի 13-ին Դարանլուից սկսում է ապստամբութեանը: Կազմվում է ռազմա-հեղափոխական կոմիտե, և իր շտաբով ձերբակալվում ռազմաճակատի հրամանատար գեներալը: Ապստամբ ուժերը շարժվելով դեպի Նոր-Բայազետ քաղաքը՝ իրենց շարքերն են առնում հարցուրավոր ապստամբ գյուղացիներ և 17-ին յերկու ժամ տեղ կռվից հետո զբաղվում քաղաքը: Յերկու որ առաջ դաշնակները ձերբակալել ելին 10-ից ավելի ակտիվ բալլընիներ և աքսորել Սեանի կղզին: Հաջորդ որը չերբ իմացվում է հակահեղափոխական դրամատսերի առաջխաղացումը՝ ապստամբները քաղաքից հեռու դիրքեր են բռնում դիմադրելու, բայց ապստամբ ուժերի հրամանատար նշանակված մի պատահական սպա, վորն անգամ ընտրված էր հեղկոմի անգամ՝ գիշերը ազատում է բանտարկված շտաբականներին և ինքն էլ նրանց հետ անցնում թշնամու կողմը: Այս բացը ընտապ լրացվում է հեղկոմի կողմից, սակայն 15-ի տաք կռվի ժամանակ մի այլ սպա մի խմբով լքում է թեղ

և անցում թշնամու—յուրաքիչները կողմը: Սկսվում է մի վայրենի խաղաղացում՝ զնդակահարություններ, ծեծ, թալան, բանտարկություններ և այլն: Ընկեր Սարուխանյանին սպանում են ինկվիզիցիոն ամենասովորի տանջանքներով, ձեռքից կապած կենդանի քաշ են տալիս փողոցներով, ծեծում, թքում և կիսակենդան դրուժյամբ յերկու որ հետո զնդակահարում:

24. Մայիսի 19-ին ապստամբությունը ծավալվում է Ղազախ-Քարվանսառայի շրջանում. ձերբակալվում են բոլոր ակտիվ գաղնակները: Մայիսի 22-ին ապստամբները Ղազախ հրավիրած կարմիր բանակի զորամասերի հետ, փոքրիկ ընդհարումից հետո գրավում են Դիլիջանը: Ազգաբնակչությունը խանդավառ դիմավորում է նրանց: Հակահեղափոխականների գործը հաջողվում է, յերբ նույն գիշերը Գանձակի մուսավաթական ավանտյուրայի հետևանքով շտապ հետ են կանչվում կարմիր բանակի զորամասերը: Թշնամին մոտենում է Դիլիջանին և հեղկոմի իր ուժերը քաշում է Իջևան՝ տալով միքանի աննկատելի զոհ: Այնուհետև Ղազախ-Շամշադինի շրջանում սկսվում են կանոնավոր և փոխոխակի հաջողություններով քաղաքացիական կռիվները: Ղազախի ապստամբ գյուղացիությունն այդ շրջանից թողել է մի հերոսական պաշարի պատմություն: Նորից գրավվում է Իջևանը և հետ հանձնվում: Աչաջուր գյուղի մոտ վոչնչացվում է խմբապետ Մուրադի հետ նրա 63 հոգուց բաղկացած ձիավոր խումբը: Վերջում հազարի հասնող ապստամբները ժամանակավորապես քաշվում են Աղբրեջան:

25. Ալեքսպոլի և մյուս շրջաններից ապստամբությունից անխլազեկ ու անկախ, նույն մայիս ամսին

շարժումներ են սկսվում նաև Զանգեզուրի գավառում: Գավառի գյուղերում կալին հազարավոր Բազվի նախկին բանվորներ: Գորիսի կաղբային բատալիոնի և գնդացիության վաշտի ուժեղ բջիջներ համարյա գլխովին հեղափոխել ելին զինվորներին: Հեղափոխվել եր ձիավոր հարյուրակը և Սիսիանի գումարտակը: Գավառի ամենաուժեղ Խնձորեսկի բջիջը, վերպես շքեղ կենտրոն, կազմակերպչական մեծ գործ եր կատարել մտահազ գյուղերում, և բջիջներ կազմակերպել:

Շարժումները ծավալվում են Սիսիանի շրջանում: Մայիսի 20-ին ձերբակալվում են գավառական պաշտոնյաները և տեղական իշխանությունները. այդ որվանից իշխանությունն անցնում է հեղկոմի ձեռքը: Մայիսի 25-ին իշխանությունը փորձում է Գորիսից մի զորամաս ուղարկել Սիսիանը ճնշելու համար, բայց զինվորները իմանալով այդ՝ վճռականորեն հրաժարվում են: Մայիսի 27-ին հարևան գյուղերի հետ ապստամբվում է Խնձորեսկը, և 28-ին կարմիր գրոզակներով «կեցցեք Խորհրդային իշխանությունը» մակագրերով կտրում Ղարաբաղից փախչող Դրոյի և Նժդեհի խմբերի ճանապարհը: Հարևան գյուղերից ոգնություն չստանալու պատճառով, փոքրիկ ընդհարումից հետո, ընկնում է Խնձորեսկը և յենթարկվում մեծ սուրբերի: Գնդակահարվում են միայն ձեռք ընկած չերկու ընկերներ: Սիսիանում հեղկոմը ցրում է զինվորական ուժերը, և գեներալ Սիլիկովի գալուց հետո, հունիսի առաջին կեսին ինքնալիկվիդացիայի յենթարկվում: Չերբակալվում և գնդակահարվում է ապստամբ ուժերի հրամանատարը:

26. Արձագանքեց նաև կաղզվանը, բայց այն ժա-

մանակ, չերբ Ղարսն ու Ալեքսանդր ընկել էյին և կան-  
խորոշել Սարիղամիշի բաղդը: Ղարսի նահանգապետի  
մայիսի 8-ի հրամանով այստեղ 13-ին ձերբակալվում  
են ութ ընկերներ, վորի առթիվ 14 ին ըմբոստանում  
են առաջին գնդի 9-րդ և 10-րդ վաշտերը մարտկոցի  
հետ և ձերբակալում գավառապետին ու գնդապետին:  
Դաշնակներն ազատում են կոմսուստներին և ամեն  
ինչ խաղաղվում ե: Իգդիրի գործասերում տարված  
են հաջող կազմակերպչական աշխատանքներ: Կոմսու-  
ստանների ձեռքն են ընկնում պահեստները: Մայիսի  
1-ից հետո կազմակերպվում է 10 հոգուց հեղկոմ վորն  
անմիջապես ձերբակալվում է, և գլխատվում ապագա  
շարժումը:

Նույնը կատարվում է Ղարաքիլիսայում: Մայիսի  
1-ի ցույցերին զբսևորվում են կոմսուստների հե-  
զինակութունն ու հաղթանակը, բանվորների, զին-  
վորների և հարևան գյուղացիների համակրանքն ու  
պատրաստակամութունը, կոմիտեն չի կարողանում  
ժամանակին ոգտագործել, և մինչև ամսի 11-ը գըլ-  
խովին ձերբակալված է լինում: Դրանից հետո գաշ-  
նակները հնարավորութուն են ունենում փակել Ա-  
լեքսանդրի և Ղարսի ճանապարհը, և 150-ի չափ ապա-  
գատակարգաչնացած տարրեր զինում, գրավում Զա-  
ջուռի տունելը և խփում ապստամբ Ալեքսանդրի թի-  
կունքից:

Գնաքեռի գործասերում հնարավոր չի լինում  
շարժում առաջ բերել՝ կազմակերպչական աշխատանք-  
ների թույլ լինելու հետևանքով:

27. Պարտութան գլխավոր պատճառներից պետք  
է համարել ամենուրեք այնքան արագորեն ծնվող

շարժման տարերայնութունը. կոմկազմակերպութուն-  
ները մի յերկու տեղ հազիվ կարողանում էյին գլուխ  
անցնել և համապատասխան ուղղութուն տալ: Այդ  
բռնկումները կատարվում էյին գլխավորապես իրարից  
անկախ, առանց նախորոք համաձայնեցնելու, վոր ինք-  
նին հետևանք եր մի ընդհանուր կենտրոնական մար-  
մնի ծրագրված ղեկավարութան թուլութան, վորի  
հետևանքով թշնամին ժամանակ շահեց և համարյա  
նույն փոքր ուժերով (վորի մի մասը ևս անհուսալի  
յեր նրանց համար) կարողացավ ձնչել առանձին-ա-  
ռանձին բոլոր գավառները: Յերկրորդ պատճառն այն  
եր, վոր բացի Ղազախից, Սարիղամիշից և մասամբ  
Նոր-Բայազեդից ապստամբութան ղեկավարներն այն-  
քան փորձ ու արագ վճռականութուն չունեցան՝ ա-  
պստամբութունը հասցնել մինչև վերջը և հեղաշըր-  
ջումն իրողութուն դարձնել՝ զննելով վստահելի ձեռ-  
քերի մեջ: Վերջինս բացատրվում է թշնամու գերա-  
գնահատութամբ և պատրաստի ուժերի սակավու-  
թյամբ: Յերրորդ՝ մինչև ապստամբութունը բանա-  
կում և միքանի գավառների գյուղերում ագիտացիոն  
և կազմակերպչական աշխատանքներ շատ քիչ կամ  
համարյա չէյին տարվել:

Անճաման գոհեր խլեցին այդ որերը մեզանից՝ Ալ-  
լահվերդյան, Սարուխանյան, Ղարիբջանյան, Դուկաս-  
յան, Մուսախելյան, Փանյան, Սեույան, Մեղքոնյան, Ա-  
դոկ, Բատիկյան, Յավրակով, Մատիչկո, Մկրտումյան,  
Ալեքսեյև, Ակորջանյան, Պրիստովսկի, Կուխմալաչկին  
Եյթուբարյան, Իսկենդերյան և այլ տասնյակ ընկեր-  
ներ: Դրանից բացի, արտակարգ դատարանների անո-  
ղոք վճիռներով բանտերը լցվեցին հարյուրավոր բան-  
վորներով, զինվորներով ու գյուղացիներով:

28. Պարտվեց մայիսյան ապստամբութիւնը, վորից հետո Դոշնակցութիւնը կարողացավ իշխել կես տարուց ավելի, բայց նա ծայր տվեց քաղաքացիական կռիվների Հայաստանում, վորոնք սկսվելով Լենինականից, Ղարսից, Նոր-Բայազետից վորոշ ընդհատումներով շարունակվեցին Ղազարում և Ջանգեղուրում, մինչև նոյեմբերյան հեղափոխութիւնը: Հայաստանի բանվորութեան ու աշխատավորութեան հեղափոխական լավագույն զավակների թափված արյունով ստեղծվեց նոր խորհրդային սոցիալիստական Հայաստանը:

Նոր սերունդը շատ դասեր ունի ուսանելու մայիսյան հերոսական շարժումներից: Մեր բոլորիս պարտքն է իմի հավաքել Հայաստանի մայիսից ֆիսցած ամբողջ հարստութիւնը — պատմութիւնը՝ լրիվ լուսաբանելու համար նրա անհայտ կամ մշուշապատ կողմերը: Մայիսյան ապստամբութիւնը Հայաստանի աշխատավորութեան սուղին մասսայական փորձն էր լի հերոսութիւններով, նա մեր հեղափոխութեան պատմութեան ամենափայլուն եջերից էր և հաղթական Հոկտեմբերի ծնունդը, վորը մեծ հպարտութեամբ է հիշվում և յերկար տարիներ պիտի հիշվի:

Այսօր, մայիսյան ապստամբութեան 10-րդ տարեդարձին, մայիսի հերոսական մարտիկների գործը շարունակում է իր հաղթական առաջընթացը: Հաղթանակող սոցիալիզմը քայլում է հսկայի քայլերով խորհրդային Միութեան մեջ և խորհրդային Հայաստանում: Դաշնակների կողմից ավերակների վերածված յերկրում բարձրանում են տասնյակ գործարաններ, խտանում են շարժումներ, արմատահան է արվում կապիտալիզմի հիմքերը գյուղում, հանուն սոցիալիզմի վերջնական հաղթանակի:

Մեր սերունդների պարտականութիւնն է մայիսյան ապստամբութեան և նրան հաջորդող մի ամբողջ տարվա քաղաքացիական կռիվներում ընկած, գնդակահարված, բանտերում մեռած խիզախ ընկերների բռնած դրոշն ավելի ամուր, բարձր պահել և վճռական անշեղ քայլերով նվաճել, ավարտել նրանց սկսած մեծ գործը՝ սոցիալիզմի կառուցման գործը, վորն ամենամեծ հուշարձանն է նրանց հիշատակը հուշվերժացնելու համար:



50

ՀՀ Ազգային գրադարան



NL0977194

29.

1

ԳՐԱԸ 10 ԿՈՊ. Մ.

3262



## Десятилетие майского восстания

Госиздат ССР Армении  
Эривань—1930